ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, գ. Եղեգնուտ,
էլ. փոստ՝ yeghegnut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » « դեկտեմբերի » 2020թ. N 22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտ գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն նախագիծը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

Համայնքի ղեկավար՝ Ա.Հակոբյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 22-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ**,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ**,

- 3000 ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **տասնութ հազար դրամ.**

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վեց հազար դրամ.**

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **տասնհինգ հազար դրամ.**

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **հինգ հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար հինգ հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **ութ հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **հինգ հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար հինգ հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **ութ հազար դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար դրամ.**

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **մեկ հարյուր հինգ դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **տասը հազար դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ,**

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ,**

զ. վիճակախաղերի համար՝ **մեկ հարյուր հազար դրամ.**

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնմեկ հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնվեց հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսանհինգ հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեսունհինգ հազար դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հարյուր հիսուն դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար հինգ հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար հինգ հարյուր դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնվեց հազար դրամ.**

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **վեց հարյուր դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար հիսուն դրամ**,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **չորս հարյուր հիսուն դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ **մեկ հարյուր տասներկու դրամ,**

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ **քառասունհինգ դրամ,**

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ**.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **երեք հազար դրամ**.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **մեկ հարյուր հիսուն հազար դրամ**.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ հարյուր հիսուն հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հարյուր հազար դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երեք միլիոն դրամ**:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ,**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **տաս հազար դրամ,**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **տասնհինգ հազար դրամ,**

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ,**

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար դրամ,**

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ,**

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական **հիսուն դրամ,**

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **երկու հազար դրամ,**

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ,** փոխհատուցման վճար:

10) Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններ՝

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ **հինգ հարյուր դրամ,**

բ. Ծննդօգնություն՝

թեթև միջամտություն՝ **մեկ հազար դրամ,**

ծանր միջամտություն՝ **հինգ հազար դրամ,**

գ. Վարակիչ հիվանդություններ նկատմամբ կենդնիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հականասնահամաճարակային միջոցառումների)

մանր կենդանի՝ **մեկ հարյուր դրամ,**

խոշոր կենդանի՝ **երկու հարյուր դրամ,**

դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ **երկու հարյուր դրամ,**

ե. Ախտահանություն՝ 1 քառ. մետր՝ **երկու հարյուր դրամ,**

զ. Միջատազերծում (դեզինսեկցիա)՝ 1 քառ. մետր՝ **մեկ հարյուր դրամ,**

է. Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ 1 քառ. մետր՝ **երկու հարյուր դրամ,**

ը. Արհեստական սերմնավորում՝ **հինգ հազար դրամ,**

թ. Կենդանու հերձում՝

մանր կենդանի՝ **մեկ հազար դրամ,**

խոշոր կենդանի՝ **երեք հազար դրամ,**

ժ. Կենդանու բուժում կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը **մեկ հազար դրամ,**

ի. Կենդանիների նախասպանդային զննում կախված կենդանու տեսակից՝

մանր կենդանի՝ **մեկ հազար դրամ,**

խոշոր կենդանի՝ **երկու հազար դրամ,**

լ. Կենդանիների հետսպանդային զննում՝

մանր կենդանի՝ **մեկ հազար դրամ,**

խոշոր կենդանի՝ **երկու հազար դրամ,**

Աշխատակազմի քարտուղար՝ Կ.Ավետիքյան

(Անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37 էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » դեկտեմբերի 2020 թվականի N 23 Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Եղեգնուտ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնուտ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 23-ի «հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը» հաստատելու մասին N 32 Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021թ.ի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

Համայնքի ղեկավար _____ Ս.Հակոբյան
անուն ազգանուն

Հավելված 1
Եղեգնուտ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 23-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավար	1	225.0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	175.0
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար	1	175.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	172.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	172.0
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հավաքարար	0.5	97.0
Ջրագծի աշխատող	0.5	110.0
ԸՆԴԱՄԵՆԸ	6	1126.0

Համայնքի ղեկավար _____ Ս.Հակոբյան
անուն ազգանուն

Հավելված 2
Եղեգնուտ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 23-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Տնօրեն	1	97.0
Դաստիարակ	1	92.7
Դաստիարակի օգնական	0.5	92.7
Հաշվապահ	0.5	92.7
Խոհարար	1	89.7
Պահակ	0.5	91.0
ԸՆԴԱՄԵՆԸ	4.5	555.8

Համայնքի ղեկավար _____ Ս.Հակոբյան
անուն ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե՝ 3 փ. N 2
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » « դեկտեմբերի » 2020թ. N 24-Ն

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ.ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով՝

Համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Եղեգնուտ համայնքի 2021թ.ի բյուջեն՝ իր եկամտային և ծախսային մասով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

Համայնքի ղեկավար _____ Ա. Հակոբյան
անուն, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ *07300655*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գ Եղեգնուտ
էլ. փոստ՝ yeghegnut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » դեկտեմբերի 2020 թվական, թիվ 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ _____ Լ.Հակոբյան
(ստորագրություն) (մտրոն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28 -ի N 25-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Արարատ Ռուբենի Ալիխանյան ---- տասնհինգ հազար դրամ, սոց. օգնություն

Ընդամենը՝ տասնհինգ հազար դրամ:

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Կ.ԱՎԵՏԻՔՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)